apricot.

Apricot Capital: Trade & Invest

Բջջային հավելվածի ուղեցույց Android համակարգի համար

Այս ուղեցույցը կօգնի արագ և հեշտ կողմնորոշվել հավելվածում և արդյունավետ օգտագործել դրա հիմնական ֆունկցիաները

1. Ընդհանուր նկարագրություն

Apricot Capital: Trade & Invest-ը **Apricot Capital** ներդրումային ընկերության հաճախորդների համար նախատեսված հավելված է: Հավելվածը հնարավորություն է տալիս իրական ժամանակում ստանալ տվյալներ շուկաներից և իրականացնել արժեթղթերով և արժույթով կատարվող գործարքներ:

Հավելվածի միջոցով հնարավոր է՝

- Հետևել բորսաներում ցուցակված արժեթղթերի ընթացիկ գներին,
- Հետևել պորտֆելի կատարողականին,
- Մուտքագրել հայտեր,
- Հետևել շուկային գրաֆիկների միջոցով,
- Ստեղծել անհատականացված դիտացանկեր և կարգավորել ծանուցումներ:

2. Ինչպես սկսել

2.1 Ներբեռնել հավելվածը

Նախ անհրաժեշտ է ներբեռնել **Apricot Capital: Trade & Invest** հավելվածը **Google Play**-ից:

Դրա համար անհրաժեշտ է.

1. Անցնել հետևյալ հղումով՝ https://play.google.com/store/apps/details?id=com.devexperts.dxmobile.apricotcapital&hl=en
2. Սեղմել **Install** (ներբեռնել) կոճակը
3. Սպասել ներբեռնման ավարտին

Հավելվածի ներբեռնումից հետո հարկավոր է մուտք գործել համակարգ:

Հավելվածից օգտվելու նախապայմանն է ունենալ բրոքերային հաշիվ Apricot Capital-ում:

Եթե չունեք բրոքերային հաշիվ, այն կարող եք բացել.

1.Հավելվածի միջոցով

Երբ բացվում է հավելվածի գլխավոր էջը, անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

1. Սեղմել Discover More with an Account (բացահայտել ավելին հաշվի միջոցով),
2. Ընտրել Register (գրանցվել),
3. Սեղմել Visit Website: Կբացվի պաշտոնական կայքը, որտեղ կարող եք գրանցվել:







2. Այցելելով պաշտոնական կայք՝ https://apricotcapital.am/

2.2 Մուտք համակարգ

Եթե ունեք բրոքերային հաշիվ Apricot Capital-ում, ապա հավելվածը բացելուց հետո անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝



1. Սեղմել Discover More with an Account (բացահայտել ավելին հաշվի միջոցով)
2. Ընտրել Login (մուտք)
3. Ընտրել Apricot Capital-ը
4. Մուտքագրել բրոքերի կողմից տրամադրված Username-ը (մուտքանունը)
5. Մուտքագրել Ձեր Password-ը (գաղտնաբառը)
6. Սեղմել Log in (մուտք) կոճակը

Եթե չեք հիշում Ձեր գաղտնաբառը, սեղմեք **Forgot Password** (մոռացել եմ գաղտնաբառը) կոճակը և սկսեք վերականգնման գործընթացը՝ մուտքագրելով Ձեր մուտքանունը: Այնուհետև հետևեք Ձեր **գրանցված էլեկտրոնային փոստին** ուղարկված նամակում գրված քայլերին՝ գաղտնաբառը վերականգնելու համար:



2.2.1 Touch ID և Face ID

Դուք կարող եք ակտիվացնել նույնականացումը **Touch ID** կամ **Face ID** մեթոդներով, եթե տվյալ հնարավորությունները հասանելի են Ձեր սարքում:

Հավելվածը կընդունի Ձեր սարքի գունային կարգավորումը՝ dark mode (մուգ գույներ) կամ light mode (բաց գույներ):

Մուտք գործելուց հետո հասանելիություն կունենաք հավելվածի գործիքակազմին:

2.3 Հավելվածի կառուցվածքը

Հավելվածի **հիմնական էջի ստորին հատվածում կտեսնեք հավելվածի հիմնական բաժինները:** Այստեղից կարող եք արագ և հարմար անցնել հավելվածի հիմնական բաժիններ:



Հիմնական բաժիններն են՝

- **Home** – գլխավոր էջ
- **Watchlist** – դիտացանկ
- **Analysis** – շուկայի վերլուծություն և գրաֆիկներ
- **Quick Trade** – գործարքների իրականացում
- **Alerts** – ծանուցումներ և հիշեցումներ
- **Menu** – հավելվածի մնացած բաժիններին և կարգավորումներին հասանելիություն

Home բաժինը



Home (գլխավոր էջ) բաժինը հավելվածի գլխավոր էջն է: Այստեղ կգտնեք Ձեր պորտֆելի ընթացիկ կատարողականի և շուկայի ակտիվության ընդհանուր պատկերի մասին տեղեկատվությունը:

Սեղմելով յուրաքանչյուր բաժնի վրա՝ կտեսնեք ավելի մանրամասն տեղեկատվություն:

Watchlist



Watchlist (դիտացանկ) բաժնում կարող եք հետևել արդեն իսկ գոյություն ունեցող դիտացանկերին կամ ստեղծել Ձեզ հետաքրքրող արժեթղթերի դիտացանկ:

Այստեղ կգտնեք ինչպես արժեթղթերի, այնպես էլ արժույթների դիտացանկեր: Այդ ցանկերից սեղմելով որևէ արժեթղթի կամ արժույթի վրա՝ կտեսնեք դրան վերաբերվող մանրամասն տեղեկատվություն ու գրաֆիկները:

Սեղմելով գրիչի տեսքով կոճակի վրա՝ կարող եք խմբագրել ցանկերի պարամետրերը, դիտացանկի արտապատկերման տեսքը և այլն:

My Lists (իմ ցանկեր) բաժնում կարող եք ստեղծել Ձեզ հետաքրքրող արժեթղթերի և/կամ արժույթների դիտացանկեր:

Markets



Markets հատվածում գրաֆիկների միջոցով կարող եք տեսնել կոնկրետ արժեթղթի գնային փոփոխությունը և շուկայի միտումները:

Գրաֆիկում **իրական ժամանակի ռեժիմով** ներկայացվում են գների փոփոխությունները՝ ներառյալ՝

- բացման և փակման գները,
- նվազագույն և առավելագույն գները,
- առևտրի ծավալը:

Analysis



Analysis (վերլուծություն) բաժինը տրամադրում է առանձին արժեթղթերի կատարողականի և շուկայի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Ձեր պորտֆելից կամ դիտացանկից սեղմելով որևէ արժեթղթի անվան վրա՝ կտեսնեք այդ արժեթղթի մասին վերլուծական տվյալները:

Էկրանին կտեսնեք հիմնական տվյալները, այդ թվում՝

- ընթացիկ գինը,
- օրական փոփոխությունը,
- առևտրի ծավալը,
- տվյալների թարմացման ամսաթիվը:

Quick Trade

Quick Trade (արագ առևտուր) բաժինը հնարավորություն է տալիս Ձեզ արագ և արդյունավետ կերպով իրականացնել արժեթղթերի կամ արժույթի առք կամ վաճառք:



Բաժինը ներառում է՝

- **Instrument Selection** (գործիքի ընտրություն) – այս ցանկից կարող եք ընտրել Ձեզ հետաքրքրող արժեթուղթը կամ արժույթը,
- **Sell/Buy** (վաճառել/գնել) – այս դաշտում կարող եք ընտրել, թե ցանկանում եք վաճառքի կամ գնման հայտ տալ,
- **Order Type** (հայտի տեսակ) – կարող եք ընտրել հայտի տեսակը՝ Market կամ Limit,

- **Price and Quantity Fields** (գին և քանակ) – այս դաշտերում կարող եք մուտքագրել գործարքի ցանկալի պարամետրերը՝ գինը և քանակը:

Հայտի բոլոր պարամետրերը մուտքագրելուց և **Send** (ուղարկել) կոճակը սեղմելուց հետո բացվում է հայտի հաստատման պատուհանը:



Order Confirmation (հայտի հաստատում) պատուհանում գործարքի կատարումից առաջ կարող եք արագ վերանայել և հաստատել հայտի հիմնական մանրամասները:

Alerts



Alerts (զգուշացում/ծանուցում) բաժինը հնարավորություն է տալիս սահմանել անհատականացված ծանուցումներ շուկայի կարևոր իրադարձությունների և գների փոփոխությունների վերաբերյալ:

Կարող եք ստեղծել ծանուցումներ՝ հիմնվելով հետևյալ չափորոշիչների վրա.

- **Price Levels** (գնի մակարդակներ) – կստանաք ծանուցում, երբ ընտրված բաժնետոմսի կամ առևտրային գործիքի գինը հասնի Ձեր կողմից սահմանված թիրախային արժեքին:
- **Percentage Change** (տոկոսի փոփոխություն) – կարող եք հետևել այն գործիքներին, որոնց գինը գերազանցում է նախապես սահմանված օրական կամ ժամային տոկոսային շեմը:
- **Volume or Activity** (ծավալ կամ ակտիվություն) – կստանաք ծանուցում անսովոր առևտրային ակտիվության կամ առևտրի ծավալի նշանակալի փոփոխությունների դեպքում:

3. Հայտի տեղադրում

Արժեթուղթ կամ արժույթ գնելու համար հայտ մուտքագրելու էջում կգտնեք հետևյալ դաշտերը.



Limit հայտ



Market հայտ

1. **Search Bar** (որոնման դաշտ) – բացվող ցանկից կարող եք ընտրել Ձեզ հետաքրքրող արժեթուղթը/արժույթը կամ մուտքագրել արժեթղթի կարճ հապավումը (օրինակ՝ AAPL*)՝ այն արագ գտնելու համար:

2. **Sell / Buy Toggle** (վաճառք/առք) – այս մասում կարող եք ընտրել՝ ցանկանում եք գնել թե վաճառել տվյալ արժեթուղթը/արժույթը:

3. **Order Type** (հայտի տեսակ) (օրինակում՝ LIMIT) – այս մասում հարկավոր է ընտրել հայտի կատարման եղանակը՝

    a. **LIMIT** – այս դեպքում Դուք եք որոշում գինը: Գործարքը կկատարվի միայն այն դեպքում, երբ շուկայում այդ գնով լինի գնորդ կամ վաճառող,
    b. **Market** – գործարքը կատարվում է անմիջապես՝ տվյալ պահին գործող շուկայական գնով,

4. **Price** (գին) – այս դաշտում գրված է արժեթղթի/արժույթի ընթացիկ գինը: Այն երևում է միայն Limit հայտի դեպքում և Դուք կարող եք այն փոփոխել՝ սահմանելով Ձեր գինը, որով ցանկանում եք գնել կամ վաճառել արժեթուղթը: Market հայտի դեպքում այս դաշտը չկա:

5. **Amount** (ծավալ) – այս դաշտը կտեսնեք Limit հայտերի դեպքում: Այն արտացոլում է lot և price (քանակ և գին) դաշտերի արտադրյալը: Այս դաշտը լրացվում է ինքնաշխատ կերպով:

6. **Lot** (քանակ), (օրինակում՝ 0) – այստեղ լրացնում եք, թե ինչ քանակի արժեթուղթ եք ցանկանում գնել/վաճառել:

7. **Validity** (հայտի գործողության ժամկետ), (օրինակում՝ Day)– ընտրեք, թե որքան ժամանակ հայտը պետք է մնա ակտիվ.

   Day (օր) տարբերակի դեպքում, եթե հայտը չի կատարվում տվյալ առևտրային օրվա ընթացքում, այն ավտոմատ կերպով չեղարկվում է:

   Fill or Kill (FOK) (կատարել կամ վերացնել) տարբերակի դեպքում համակարգը ստանում է հրահանգ տեղում և ամբողջությամբ կատարել հայտը, իսկ կատարման անհնարինության դեպքում այն ամբողջությամբ չեղարկել: Օրինակ՝ ցանկանում եք Ձեր սահմանած գնով գնել 20 արժեթուղթ: FOK հրահանգի դեպքում համակարգն այդ գնով կփորձի գնել Ձեր նշած արժեթղթերը: Ենթադրենք համակարգը շուկայում այդ գնով գտել է միայն 15 հատ Ձեր ընտրած արժեթղթից: FOK-ի դեպքում համակարգն ամբողջությամբ կչեղարկի հայտը, քանի որ շուկայում Ձեր ցանկացած գնով ու քանակով չի գտել այդ արժեթղթից:

   Immediate or Cancel (IOC) (անհապաղ կամ չեղարկել) տարբերակի դեպքում համակարգը ստանում է հրահանգ տեղում կատարել հայտը որքանով որ հնարավոր է: Հայտի այն մասը, որը հնարավոր չի լինի կատարել, կչեղարկվի: Օրինակ՝ ցանկանում եք Ձեր սահմանած գնով գնել 20 արժեթուղթ: IOC հրահանգի դեպքում համակարգն այդ գնով կփորձի գնել Ձեր նշած արժեթղթերը: Ենթադրենք համակարգը շուկայում այդ գնով գտել է միայն 15 հատ Ձեր ընտրած արժեթղթից: Այն կգնի

այդ 15 հատը, իսկ մնացած 5 արժեթղթի հայտն ինքնաշխատ ձևով կչեղարկի:

8. **Portfolio** (պորտֆել), (օրինակում՝ 0) – ցույց է տալիս տվյալ արժեթղթի քանակը Ձեր պորտֆելում:

9. **SEND** (ուղարկել) – այս կոճակը հնարավոր է սեղմել բոլոր դաշտերը լրացնելուց հետո՝ հայտը հաստատելու և ուղարկելու համար:

4. Պորտֆելի կառավարում

4.1. Portfolio Value (պորտֆելի արժեք) բաժին

Ձեր պորտֆելի կատարողականին կարող եք ծանոթանալ Portfolio Value (պորտֆելի արժեք) բաժնում:



Այստեղ կգտնեք տեղեկատվություն հետևյալի մասին.

- **Equities** (Բաժնետոմսեր)

- **Live P/L** (Profit/Loss), (իրական ժամանակով շահույթ կամ վնաս)– պորտֆելում առկա դիրքերի չիրացված շահույթը կամ վնասը իրական ժամանակում՝ արտահայտված ԱՄՆ դոլարով (USD):
- **Positions Value** (դիրքի արժեք) – պորտֆելի դիրքերի արժեքը (բաժնետոմսերի քանակը բազմապատկված վերջին ընթացիկ գնով)՝ արտահայտված ԱՄՆ դոլարով:
- **Trade Volume** (առևտրի ծավալ) – օրական իրականացված գործարքների ծավալը (քանակ × գործարքի կատարման գին):
- **Cash** (կանխիկ) – պորտֆելում առկա կանխիկ միջոցները՝ արտահայտված ԱՄՆ դոլարով:
- **Portfolio** (պորտֆել) – պորտֆելի ընդհանուր արժեքը՝ ներառյալ կանխիկ միջոցները և դիրքերը՝ արտահայտված ԱՄՆ դոլարով:
- **Buying power** (գնողունակություն) – հաշվարկվում է հետևյալ կերպ՝ սեփական միջոցներ (Կանխիկ TO + Բաժնետոմսերի դիրքերի արժեք) – SUM (Բաժնետոմսերի դիրքերի արժեքի վարկ): Արժեքի վարկը ժամանակավորապես սահմանված է 0:
- **Daily executions** (օրական գործարքներ) – տվյալ օրվա ընթացքում կատարված գործարքների քանակը:
- **Day commission** (օրվա միջնորդավճար) – օրվա ընթացքում գանձված միջնորդավճարների ընդհանուր գումարը:

- **Currency Balances** (արժութային մնացորդներ)
  - Պորտֆելում առկա տարբեր արժույթներ:
- **Margin Balances**
  - **Portfolio Status** (պորտֆելի կարգավիճակ) – ցույց է տալիս Ձեր բրոքերային հաշվի վիճակը՝ նորմալ, մարժային կանչ վիճակում, փակման փուլում կամ չսահմանված, եթե հաշիվը առևտրի համար հասանելի չէ:
  - **Aggregated Portfolio Value** (ընդհանուր պորտֆելի արժեք) – պորտֆելի բոլոր դիրքերի ընդհանուր զուտ արժեքը՝ ներառյալ

կանխիկ միջոցները, ներդրված դիրքերը, margin loans-ը (մարժայով տրված միջոցները) և արժեթղթերի կարճ դիրքերը:

- **Liquid Portfolio Value** (պորտֆելի իրացվելի արժեքը) – մարժային դիրքերի ընդհանուր զուտ արժեքը (արժույթներ և արժեթղթեր):
- **Initial / Maintenance Margin Requirements** (սկզբնական մարժայի / մարժայի պահպանման պահանջները) – սահմանում են պորտֆելի զուտ արժեքի նկատմամբ անհրաժեշտ նվազագույն պահանջները: Եթե պորտֆելի արժեքը ցածր է սկզբնական մարժայի մակարդակից, նոր դիրքերի բացումը սահմանափակվում է:
- **Maintenance Margin Requirement** (մարժայի պահպանման պահանջ) – պորտֆելի զուտ արժեքի նվազագույն թույլատրելի մակարդակը: Եթե պորտֆելի զուտ արժեքը իջնում է այս մակարդակից ցածր, բրոքերը սկսում է փակել դիրքերը, մինչև պորտֆելի արժեքը կրկին գերազանցի սահմանված շեմը:
- **Free Equity Value** (ազատ սեփական միջոցների արժեք) – պորտֆելի իրացվելի արժեքի և սկզբնական մարժային պահանջի տարբերությունը (ազատ իրացվելիություն):

4.2 Portfolio and Orders (պորտֆել և հայտեր) բաժին

Այս բաժինը կարող եք տեսնել անցնելով գլխավոր մենյու և ընտրելով Portfolio and Orders (պորտֆել և հայտեր): Այստեղ կտեսնեք մանրամասներ Ձեր պորտֆելի կատարողականի մասին, ինչպես նաև Ձեր հայտերը:





4.2.1 Հաշվի ամփոփ ներկայացում



- **Account ID** (հաշվի նույնականացման համար) – Սա Ձեր հաշվի եզակի համարն է, որն օգտագործվում է ներքին նույնականացման և տեխնիկական աջակցման նպատակներով:
- **Portfolio Value** (պորտֆելի արժեք), (օրինակում՝ $999,999.93) – հաշվի ընթացիկ ընդհանուր արժեքը՝ ներառյալ կանխիկ միջոցները և բոլոր ակտիվ դիրքերը:
- **Live P/L** (Profit/Loss), (իրական ժամանակով շահույթ կամ վնաս) – պորտֆելում առկա դիրքերի չիրացված շահույթը կամ վնասը իրական ժամանակում՝ արտահայտված ԱՄՆ դոլարով (USD): Եթե ակտիվ գործարքներ չկան, դաշտը մնում է դատարկ:
- **Positions Cost** (դիրքի ծախս) – Ձեր կողմից ներկայումս պահվող բաց դիրքերի ընդհանուր ծախսը (եթե առկա են բաց դիրքեր):
- **Trade Volume** (առևտրի ծավալ) – ընտրված ժամանակահատվածում իրականացված գործարքների կուտակային ծավալը:

4.2.2 Orders (հայտեր)

Այս բաժնում կտեսնեք Ձեր բոլոր ընթացիկ, սպասման մեջ գտնվող և ավարտված հայտերը:

- **Symbol** (սիմվոլ) – բաժնետոմսերի կամ գործիքների կարճ հապավումները (օրինակ՝ AAPL*, LAB*, ASML*):
- **Side/Status** (կողմ/կարգավիճակ) – ցույց է տալիս՝ արդյոք հայտը առքի թե վաճառքի է և դրա ընթացիկ կարգավիճակը (օրինակ՝ Working (ընթացքում), Rejected (մերժված), Filled (կատարված)):

Կարգավիճակը կարելի է տարբերակել նաև գույներով.

🟡 Դեղին գույնը նշանակում է, որ հայտն ընթացքի մեջ է, ակտիվ է և սպասում է կատարման:

🔴 Կարմիր գույնը նշանակում է, որ հայտը մերժված է և չի ընդունվել: Հնարավոր պատճառներից են՝ հաշվին չկա բավարար միջոց, մուտքագրել եք սխալ հապավում (ticker), ընտրել եք հայտի ոչ վավեր տեսակ կամ կան առևտրային սահմանափակումներ:

🟢 Կանաչ գույնը նշանակում է, որ հայտը կատարված է:

- **Type** (տեսակ) – ցույց է տալիս հայտի տեսակը՝ օրինակ Limit կամ Market:
- **Total size** (Ընդհանուր չափ) – ցույց է տալիս հայտի ամբողջական քանակը (լոտերը):
- **Filled size** (Կատարված չափ) – ցույց է տալիս տվյալ հայտի շրջանակում իրականացված բոլոր գործարքների հանրագումարը:
- **Size** (Չափ) – ցույց է տալիս հայտի դեռևս չկատարած քանակը (լոտերը):

Կատարված չափը 0 է, երբ որևէ գործարք չի իրականացվել: Դա կարող է տեղի ունենալ, եթե հայտը մերժվել է, չեղարկվել է կամ դեռևս գտնվում է «աշխատանքային» (working) կարգավիճակում, քանի որ սահմանված գինը (limit price) դեռ չի բավարարվել:

- **Fill Price** (կատարման գին) – հայտի կատարման միջին գինը: Այն ցուցադրվում է միայն հայտի կատարման դեպքում:

5. Ելք



Հավելվածից դուրս գալու համար բացեք էկրանի ստորին աջ անկյունում գտնվող **Menu** ընտրացանկը և ընտրեք **Logout** (դուրս գալ համակարգից):

*Կարևոր է հիշել, որ ցանկացած ներդրում ենթակա է շուկայական տատանումների և կրում է ներհատուկ ռիսկեր: Նախքան ներդրումներ կատարելը, հաշվի առեք Ձեր ֆինանսական նպատակները և ֆինանսական ռիսկեր ստանձնելու Ձեր ունակությունը:

Էփրիքոթ Կապիտալը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Նյութում ներկայացված օրինակները կրում են միայն տեղեկատվական բնույթ: Դրանք չեն հանդիսանում ներդրումային խորհուրդ կամ որևէ կոնկրետ արժեթուղթ գնելու կամ վաճառելու առաջարկ: Տեքստում նշված նախկինում գրանցված կատարողականը չի երաշխավորում ապագայում նմանատիպ արդյունքներ: